ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Ի պատասխան № **LGDR/NCB/PG-2024/1 «Թալին համայնքի Արագածավան բնակավայրում ֆոտովոլտային կայանների տեղադրում /բաղկացած 2 լոտից/»** մրցույթի վերաբերյալ 12/08/2024թ. Armeps համակարգով 12/08/2024թ. էլ. փոստով ստացված հարցմանը ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումը.

Հարց N 1՝

Մատակարարման ժամկետ /90 օր, 60 օր/ մինչև ապրանքները տվյալ հասցե հասցնելը, թե՞ ներառյալ կայանի կառուցումը

Պատասխան N 1՝

90 օրը և 60 օրը վերաբերվում է համապատասխանաբար 150 կՎտ և 100 կՎտ արևային ֆոտովոլտային կայանների հանձմանը՝ կառուցված և փորձարկված:

Հարց N 2՝

Ապրանքները կարո՞ղ ենք ներմուծել պատվիրատուի անունով

Պատասխան N 2՝

Ապրանքները ներմուծվում են պատվիրատուի անունով:

Հարց N 3՝

EXW, CIP-առաքման պայմանները ՀՀ-ի համար են, թե՞ ներմուծման

Պատասխան N 3՝

Խնդրում ենք առաջնորդվել համաձայն մրցութային հրավերի Բաժին II - Մրցույթի Տվյալների Աղյուսակ (ՄՏԱ) ՑՀ 14.7-րդ կետի, միաժամանակ տեղեկացնում ենք, որ ֆոտովոլտային կայանների մատակարարման և տեղադրման վերջնակետ են համարվում

Լոտ 1՝ ՀՀ, Թալին համայնք, Արագածավան բնակավայրը,

Լոտ 2՝ ՀՀ, Թալին համայնք, Արագածավան բնակավայրը:

Հարց N 4՝

Եթե ապրանքները չենք ներմուծում, ի՞նչ պիտի լինի առաքման պայմանը

Պատասխան N 4՝

Ֆոտովոլտային կայանների մատակարարման և տեղադրման վերջնակետ են համարվում

Լոտ 1՝ ՀՀ, Թալին համայնք, Արագածավան բնակավայրը,

Լոտ 2՝ ՀՀ, Թալին համայնք, Արագածավան բնակավայրը։

Հարց N 5՝

Հայտի նամակ-Մեքենաների և սարքավորումների գնում համայնքների համար-ի՞նչ սարքավորումների մասին է խոսքը

Պատասխան N 5՝

Հայտի նամակի «դ) Համապատասխանություն» բաժնի [ներմուծեք Ապրանքների և հարակից ծառայությունների համառոտ նկարագրությունը] հատվածում լրացվում է մատակարարվող ապրանքների անվանումները։

Հարց N6՝

Ցանկապատ-շին.թույլտվություն կա՞

Պատասխան N 6՝

Քանի որ ցանկապատ է, այլ ոչ քարե շինություն, ապա շին.թույլտվություն հարկավոր չէ:

Հարց N 7՝

Հարգելի Պատվիրատու, տվյալ մրցույթի շրջանակներում ձեր կողմից նշվում է պահանջ լոտ 1-ի դեպքում տարեկան 240 461 կվտ.ժ, իսկ լոտ 2-ի դեպքում՝ 159

944կվտ.ժ արտադրողականություն։ ՀՀ-ի տարածքում նման արտադրողականություն ստանալը ռեալ չէ։ Խնդրում ենք տալ պարզաբանում՝ ինչով է պայմանավորված նման պահանջը, հղում տալ որևէ կոնկրետ հաշվարկի, որը կհիմնավորի նման արտադրողականության հնարավորությունը, եթե այն պարտադիր պայման է։

Պատասխան N 7՝

Հաշվարկները իրականացվել են Pvsyst և HelioScope ծրագրային փաթեթների օգնությամբ, միաժամանակ տեղեկացնում ենք, որ մրցութային պահանջները սահմանվում են համաձայն ԱՄՆ ՄԶԳ Տեղական ինքնակառավարման և ապակենտրոնացման բարեփոխումների ծրագրի վարկային համաձայնագրի և Համաշխարհային բանկի ուղեցույցների։

Հարգանքով,
Ռոզա Դանիելյան
№ LGDR/NCB/PG-2024/1 մրցույթի քարտուղար
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
14.08.2024թ.